ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզիՆոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noyemberyanhamaynq@rambler.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"27" հունիսի 2012 թվականի N 112- Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության "Տեղական ինքնակառավարման մասին " օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետով, հիմք ընդունելով Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ավագանու 04.11.2010 թ. թիվ 07 որոշումը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Նոյեմբերյանի ՏՀՏ-ի պետի գրությունը և Նոյեմբերյան համայնքի ղեկավարի օգնական Արտեմ Սամվելի Բուդաղյանի զեկուցագիրը *որոշում եմ.*

1. Նոյեմբերյանի քաղաքապետարանի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի միջև ոչ բնակելի տարածքի 30.11.2011 թ. կնքված թիվ 2958 վարձակալության պայմանագրի 1.1 և 3 կետերում կատարել փոփոխություն:
   1) Պայմանագրի 1.1 կետի երկրորդ պարբերության ,,մակերեսը կազմում է,, բառերից հետո կարդալ ,,44.02 քմ, (թիվ 1 սենյակը՝ 30.34 քմ և թիվ 8 սենյակը՝ 13.68 քմ),,
   2) Պայմանագրի 3-րդ կետի ,,վարձավճարը կազմում է,, բառերից հետո կարդալ ,,22 010 ՀՀ դրամ,,
2. Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում կատարել լրացումներ.
   Պայմանագրի 4-րդ մասում ավելացնել 4.5 կետը՝
   - Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի նկատմամբ 0,5 տոկոսի չափով:
   - Սույն պայմանագրով նախատեսված տարածքի հանձնման ժամկետի խախտման համար վարձատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չկատարած մասի գումարի 0,05 տոկոսի չափով:
   - Սույն պայմանագրով նախատեսված՝ վարձատուի նկատմամբ հաշվարկված տույժերը, տուգանքները հաշվարկվում են և հաշվանցվում են վարձատուի վճարման ենթակա գումարից:
   -Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
   -Տուգանքի և տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:
3. Պայմանագիրը լրացնելու և փոփոխելու մասին համաձայնագրում ավելացնել 3-րդ կետ՝ հաջորդ տարիների մասով պայմանագիրը կշարունակի գործել համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:
4. Որոշման կատարումը հանձնարարել Նոյեմբերյան համայնքի ղեկավարի օգնական Արտեմ Սամվելի Բուդաղյանին:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ